ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2043-Ն/16

ք. Երևան «23» դեկտեմբերի 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Գ. Սաֆարյանի (այսուհետ պետական մարմին), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ կազմակերպություն), ի դեմս տնօրեն Կ. Շահբազյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2043 -Ն որոշումը (այսուհետ որոշում), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է «Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ-ի անհրաժեշտ լուսաձայնային սարքավորումների ձեռքբերման համար «Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրել՝ **286 107 100** (երկու հարյուր ութսունվեց միլիոն մեկ հարյուր յոթ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է միջոցառումն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված 1-ում, իսկ ձեռքբերվող գույքի նախահաշիվը՝ հավելված 2-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5. Պայմանագրի 2.4.4-րդ ենթակետով սահմանված ժամկետում կազմակերպությունից պահանջել ներկայացնել նույն ենթակետով նախատեսված հաշվետվությունը,

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. գնման պայմանագիրը կնքելուց հետո 10-օրյա ժամկետում Պետական մարմին ներկայացնել գնման պայմանագրի պատճենը, իսկ միջոցառումների ավարտից հետո սույն Պայմանագրի 6.1. կետով սահմանված ժամկետում Պետական մարմին ներկայացնել

ֆինանսական և բովանդակային հաշվետվություն՝ իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառման մասին (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպության մոտ, վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար):

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան

2.4.7. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև սույն Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների (ֆինանսական և բովանդակային) ընդունմանը հաջորդող 15-րդ աշխատանքային օրը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը տրամադրում է համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2043 -Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է Պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 0.5 տոկոսի չափով: Տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագիրը դրանով սահմանված ժամկետներում կատարելու, սակայն Պետական մարմնի կողմից չընդունվելու դեպքում: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

5.2. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.3. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կազմակերպությունը Պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.15 (տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.4. Պետական մարմինը 5.1., 5.2. և 5.3. կետերով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2024թ. հունվարի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև Պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, սակայն ոչ ուշ, քան 2024 թվականի մարտի 1-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե

անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2	ք. Երևան, Վ. Սարգսյան 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011035335	Հ/Հ 900018001579
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 02510974
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն
Գ. Սաֆարյան	Կ. Շահբազյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	

Հավելված 1
2022 թ. դեկտեմբերի 23 -ին
կնքված N 2043-Ն/16 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառումներ					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնա-ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1	Թատերահամերգային կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի համալրում	«Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ-ի անհրաժեշտ լուսային սարքավորումների ձեռքբերում՝ համաձայն հավելված 2-ով հաստատված նախահաշվի	Գույքի ձեռքբերումը կազմակերպվում է «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով	Նոր լուսաձայնային սարքավորումներով ապահովված թատրոն	01.01.2024թ.	177 482 100
2		«Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ-ի անհրաժեշտ ձայնային սարքավորումների ձեռքբերում՝ համաձայն հավելված 2-ով հաստատված				108 625 000

		նախահաշվի				
		Ընդամենը՝				**286 107 100**

Պետական մարմին
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011035335
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Գ. Սաֆարյան
Կ.Տ (ստորագրություն)

Կազմակերպություն
«Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Վ. Սարգսյան 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001579
ՀՎՀՀ 02510974
Տնօրեն

Կ. Շահբազյան
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված 2
2022 թ. դեկտեմբերի 23-ին
կնքված N2043-Ն/16 պայմանագրի

«Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ-ի համար անհրաժեշտ ձեռքբերվող արքավորումների նախահաշիվ

Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր գինը, ՀՀ դրամ
թատրոնի բեմի լուսային համակարգ	«Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ-ի բեմի լուսային համակարգը բաղկացած է լուսային համակարգից մալուխներից և պարագաներից: Նշված համակարգը, մալուխները և պարագաները պետք է համապատասխանեն ստորև բերված տեխնիկական առաջադրանք-1-ին: Լրակազմում նշված ապրանքների երաշխիքային ժամկետները՝ առնվազն 1 տարի: Լրակազմում նշված ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Լրակազմի տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը, մոնտաժումը, ծրագրավորումը, փորձարկումը, համակարգի գործարկումը, ինչպես նաև համապատասխան մասնագետի հրահանգումը իրականացվում է Մատակարարի կողմից:	լրակազմ	177 482 100

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ-ԱՌԱՋԱԴՐԱՆՔ-1

N/N	անվանումը/տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	քանակը
1	2	3	4
	1.ԼՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ		
1.1	Գծային լուսադիոդային լուսարձակ՝ Հզորությունը 330w, գույնի ջերմաստիճանը 3200K, RGB+տաք սպիտակ	հատ	24
1.2	Դինամիկ պտտվող LED պտտվող լույս՝ Հզորությունը 270w COB LED, 8-44 աստիճան բացման անկյուն, CMY գունային համակարգ, պտտվող անիվ 7 գունավոր	հատ	24

	զտիչներով,պտտման աստիճան TILT 265-PAN540		
1.3	Թատերական LED լուսարձակ՝ LED լուսարձակ, 1000 վտ հալոգենային լամպին համարժեք, անկյան բացվածքը 17-42 աստիճան, գունային ջերմաստիճանը 3200K-5600K	հատ	24
1.4	Պրոֆիլային թատերական լուսարձակ՝ Հզորությունը 230w COB LED, համարժեք 750w հալոգենային լամպին, գույնի ջերմաստիճանը 3200K, անկյան բացվածքը 15-30 աստիճան և 25-50 աստիճան	հատ	24
1.5	Կետային թարթող LED լույս՝ LED strobe, հզորությունը 1728X1w RGBW, բացման անկյունը 120 աստիճան	հատ	10
1.6	Պտտվող դինամիկ LED լույս՝ Հզորությունը 19X20w, RGW, բացման անկյան բացվածքը 4-52 աստիճան, PAN540 / TILT233,լուսատվությունը 4 աստիճան-23751lx,52 աստիճան-682lx	հատ	16
1.7	Մշուշի մեքենա՝ Հզորությունը 390վտ, տանկի ծավալը՝ 2,5լ, մեխանիկական և DMX կառավարում, աշխատանքային ռեժիմ 0-40 աստիճան	հատ	2
1.8	Ծանր ծխի մեքենա՝ Հզորությունը 1400վտ, բաքի ծավալը՝ 6,7լ ջուր և 1,8 գլիցերին, DMX կառավարում	հատ	2
1.9	Ծխի մեքենա՝ Հզորությունը 1350վտ, տանկի տարողությունը 3,5լ, DMX կառավարում	հատ	2
1.10	Թատերական հետևող լուսարձակ՝ Հզորությունը 300wLED, աշխատանքային հեռավորությունը 25-50 մ, ձեռքով ֆոկուսի կարգավորում, անկյան բացվածքը 7-17 աստիճան	հատ	2
1.11	Լույսի կառավարման վահանակ՝ 2 ներկառուցված էկրան 15 «LCD Multi Touch, ArtNet / sACN / Pathport univers, 4 DMX ելք, 5 USB պորտ, 1 աուդիո մուտք, 1 աուդիո ելք, MIDI պորտ 1 մուտք և 1 ելք	հատ	1
	2.ՄԱԼՈՒԽՆԵՐ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐ		
2.1	DMX մալուխ՝ AWG 24.2X7X0.20 մմ, 120 ohm դիմադրություն	մետր	1000
2.2	Հոսանքի մալուխ՝ 4X10 մմ (պղինձ)	մետր	100
2.3	Հոսանքի մալուխ՝ 1X1,5 մմ (պղինձ)	մետր	1000
2.4	Կախիչ՝ Լուսատուների համար ալյումինե կախիչներ չափսերը՝ 22սմx2.50սմx14սմ	հատ	240
2.5	3 կոնտակտային XLR միակցիչներ՝ 3 կոնտակտային միակցիչներ մոնտաժման համար	հատ	100
2.6	5 կոնտակտային XLR միակցիչներ՝ 5 կոնտակտային միակցիչներ մոնտաժման համար	հատ	300
2.7	Ալյումինե կոնստրուկցիա՝ Քառակուսի/390մմx390 մմ,խողովակի տրամագիծ-50մմ,պատի հաստություն-3մմ,AW 6082 T6 ստանդարտ	մետր	56
2.8	Լուսավորող սարքերի բաժանարար սարք՝ Լույսի բաժանիչ, 1 մուտք, 4 ելք	հատ	4
2.9	Հեղուկ ծխի մեքենաների համար՝ Յուղային հիմքով հեղուկ, առանց հոտի	լիտր	100

Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր գինը, ՀՀ դրամ
<u>թատրոնի բեմի ձայնային համակարգ</u>	«Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ-ի բեմի ձայնային համակարգը բաղկացած է ձայնային համակարգից, համակարգչային տեխնիկայից, ստուդիայի համար սարքավորումներից, մալուխներից և և պարագաներից, ներքին կապի համակարգից, տրանսլյացիոն աուդիո համակարգից: Նշված ձայնային համակարգը, համակարգչային տեխնիկան, ստուդիայի համար սարքավորումները, մալուխները և պարագաները, ներքին կապի համակրգը, տրանսլյացիոն աուդիո համակարգը պետք է համապատասխանեն ստորև բերված տեխնիկական առաջադրանք-2-ին: Լրակազմում նշված ապրանքների երաշխիքային ժամկետները՝ առնվազն 1 տարի: Լրակազմում նշված ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Լրակազմի տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը, մոնտաժումը, ծրագրավորումը, փորձարկումը, համակարգի գործարկումը, ինչպես նաև համապատասխան մասնագետի հրահանգումը իրականացվում է Մատակարարի կողմից:	լրակազմ	108 625 000

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ-ԱՌԱՋԱԴՐԱՆՔ-2

N/N	անվանումը/տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	քանակը
1	2	3	4
	1.ՁԱՅՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ		
1.1	Ներկառուցված ուժեղացուցիչով ակուստիկ համակարգ՝ 2X10" նեոդիմում բարձրախոս, 1.4" նեոդիմում բարձր հաճախականության բարձրախոս, հաճախականության միջակայքը 65-18000 Հց, բացման անկյունը 100X30 աստիճան, SPL 137db, D դասի ուժեղացուցիչ, հզորությունը 1500w	հատ	12
1.2	Ցածր հաճախականության բարձրախոսների համակարգ՝ 1X18" նեոդիմում բարձրախոս, հաճախականության միջակայքը 30-150 hz, SPL 134 db., D դասի ուժեղացուցիչ, հզորությունը 1500 վտ	հատ	4
1.3	Բեմական մոնիտոր ներկառուցված ուժեղացուցիչով՝ 1X15"" նեոդիմում բարձրախոս, 1X1.4"բարձր հաճախականության բարձրախոս, հաճախականության միջակայքը 60-	հատ	8

	18000hz, SPL 130db., D դասի ուժեղացուցիչ, հզորությունը 700w		
1.4	Մետաղական կախիչ բարձրախոսների համար՝ Բարձրախոսների համար նախատեսված պողպատե կախիչ, չափերը՝ 65սմx55սմ	հատ	4
1.5	Բեմական թվային տուփ՝ 32 անալոգային մուտք, 16 անալոգային ելք, 8 թվային ելք, RJ45 պորտ	հատ	1
1.6	Տրանսֆորմատորային տուփ՝ Ոչ բալանսավորված ազդանշանը բալանսավորող ազդանշանի վերածող ակտիվ սարք, 1 մուտք, 1 xlr ելք	հատ	4
1.7	Տրանսֆորմատորային տուփ՝ Ոչ բալանսավորված ազդանշանը բալանսավորող ազդանշանի վերածող պասիվ սարք, 1 մուտք, 1 xlr ելք	հատ	4
1.8	Թվային ձայնի կառավարման վահանակ բեմական միավորով 64 մոնո մուտքեր, 8 ստերեո ելքեր, 16 ելքեր, 8 մատրիցներ, 34 շարժիչային 100 մմ ֆեյդեր, 46 ստուդիական ստերեո էֆեկտներ	հատ	1
1.9	Խոսափող՝ Կոնդենսատորային խոսափող նախատեսված հարվածային գործիքների համար,հաճախականության տիրույթ 20-20 khz, դիմադրություն 150 ohm, SPL 163 db	հատ	4
1.10	Խոսափող՝ Դինամիկ խոսափող ցածր հաճախականության գործիքների համար, հաճախականության միջակայք 20-10 կhg, դիմադրություն 45 ohմ, SPL 174 դբ	հատ	2
1.11	Խոսափող՝ Դինամիկ գործիքի խոսափող, հաճախականության միջակայք 40-15 կՀg, դիմադրություն 310 ohմ	հատ	5
1.12	Խոսափող՝ Դինամիկ վոկալ խոսափող, հաճախականության տիրույթ 50-15 կhg, դիմադրություն 300 ohմ	հատ	8
1.13	Խոսափող՝ Կոնդենսատոր խոսափող, հաճախականության տիրույթ 20-20 կhg, դիմադրություն 85 ohմ	հատ	10
1.14	Հեռակառավարվող խոսափող՝ Ռադիոհամակարգ, գերկարճ տիրույթ (UHF) 24 bit / 48 khz, DANTE աուդիո ինտերֆեյս, կարգավորման տիրույթ 72 mhz, նույն տիրույթում աշխատող ձեռքի հաղորդիչ խոսափող, որն ունի 1mw, 10mw կամ 20mw հզորությամբ ռադիոհաճախա-կանության ելք	հատ	10
1.15	Անլար ռադիոհամակարգ՝ UHF ռադիոհամակարգ, 168 ընտրովի հաճախականություններ, 42mhz թողունակություն և 30mw ռադիոհաճախականության ելք,նույն տիրույթում աշխատող գոտուն ամրացվող ընդունիչի հետ	հատ	16
1.16	Փոքր գլխիկով խոսափող՝ Փոքր գլխիկով խոսափող, հաճախականության տիրույթ 50-18khz, ռադիոհամակարգին միանալու միակցիչով	հատ	10
1.17	Գլխի խոսափող՝ Կոնդենսատորային խոսափող վոկալի և խոսքի համար ռադիոհամակարգին միանալու միակցիչով, հաճախականության միջակայքը 20-20 khz	հատ	16
1.18	Անտենաների բաժանարար սարք՝ Ակտիվ բաժանարար՝ մինչև 4 ռադիոընդունիչ միացնելու ունակությամբ, աշխատանքային տիրույթ 470-ից 860 mhz	հատ	6
1.19	Անտենա՝ Լայն սպեկտորի UHF ալեհավաք՝ ակտիվ բաժանարարին միանալու համար:	հատ	4
1.20	Անտենաների բաժանարար սարք՝ Ակտիվ ալեհավաքի բաժանարար՝ 4-ից 5 ռադիոընդունիչ միացնելու ունակությամբ, աշխատանքային միջակայքը 470-952 mhz	հատ	3
1.21	Անտենա՝ Լայն սպեկտորի UHF ակտիվ ալեհավաք, աշխատանքային տիրույթ 470-952 mhz, չափերը՝ 359 մմx316 մմx36 մմ, դիմադրություն 50 ohմ, BNC մուտք	հատ	2
1.22	Պահարան՝ 19" պահարան՝ 7 մմ հաստությամբ նրբատախտակից, չափերը՝ 54,5սմx64սմx17,5սմ	հատ	2

1.23	Պահարան՝ 19" պահարան՝ պատրաստված 9մմ նրբատախտակից, չափսերը՝ 53,5սմx63,5սմx87,5սմ	հատ	1
1.24	Պահարան՝ 19" պահարան պատրաստված 9մմ նրբատախտակից, չափսերը՝ 55,5սմx63սմx42սմ	հատ	1
1.25	Անլար ականջի մոնիտորի հաղորդիչ՝ Երկալիք հաղորդիչ, կարգավորման տիրույթը տիրույթ մինչև 80 mhz, կարգավորվող ռադիոհաճախականության ելքային հզորություն, բարձր կոնտրաստային LCD էկրան, Ethernet միացում	հատ	2
1.26	Ընդունիչ՝ ականջակալով հաղորդիչի համար՝ Գոտուն ամրացվող ընդունիչ, 100mw ձայնային հզորություն, 4 ohm նվազագույն դիմադրություն	հատ	4
	2.ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱ		
2.1	Համակարգիչ՝ PC i 7-9700, DDR 4 (2x16), HDD 4TB, SSD 240GB	հատ	1
2.2	Մոնիտոր՝ 17" լայնաէկրան մոնիտոր, 1920x1080-60hz, 16,7M գույներ, VGA, HDMI աուդիո/վիդեո մուտք և ելք	հատ	3
2.3	UPS էլեկտրամատակարարում՝ Անխափան սնուցման սարք, ոչ պակաս, քան 1 կՎտ	հատ	3
2.4	Ձայնագրման ծրագիր՝ Բազմաալիք ձայնագրման համակարգչային ծրագիր, OS Windows 8.1, RAM 4GB	հատ	1
2.5	Դյուրակիր համակարգիչ՝ I5 պրոցեսոր, 15,6" FULL HD էկրան, 8 ԳԲ DDR 4 RAM, 256 GB SSD, 2,4 Ghz TURBO BUST	հատ	1
	3.ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՍՏՈՒԴԻԱՅԻ ՀԱՄԱՐ		
3.1	Ստուդիայի մոնիտոր՝ 8" բարձրախոս, 1" բարձր հաճախականության բարձրախոս, ներկառուցված ուժեղացուցիչ 120w հզորությամբ, հաճախականության տիրույթը 38hz-30khz	հատ	2
3.2	Ստուդիայի խոսափող՝ Լայն դիֆրագմային կոնդենսատոր խոսափող, դիմադրություն 50 ohm, հաճախականության տիրույթը 20hz-20khz	հատ	1
	4.ՄԱԼՈՒԽՆԵՐ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐ		
4.1	Խոսափողի մալուխ՝ AWG 20.2X28X0.15 մմ	մետր	300
4.2	Հոսանքի մալուխ՝ 4X10 մմ (պղինձ)	մետր	100
4.3	Հոսանքի մալուխ՝ 1X1,5 մմ (պղինձ)	մետր	1000
4.4	3 կոնտակտային XLR միակցիչներ՝ 3 կոնտակտային միակցիչներ մոնտաժման համար	հատ	200
4.5	LAN RJ45 մալուխ՝ Ethernet Cat 6 մալուխ	մետր	300
4.6	Խոսափողիի հենակներ՝ Ալյումինե եռոտանի հիմք, շարժական թև 54սմ-ից 84սմ կարգավորմամբ, հենակի նվազագույն բարձրությունը 95սմ, առավելագույնը մինչև 160սմ	հատ	32
	5.ՆԵՐՔԻՆ ԿԱՊԻ ՀԱՄԱԿԱՐԳ, ՏՐԱՆՍԼՅԱՑԻՈՆ ԱՈՒԴԻՈ ՀԱՄԱԿԱՐԳ		
5.1	Ներքին կապի թվային համակարգ՝ 8-ալիքային լարային կապի համակարգ, որը թույլ է տալիս ուղիղ միացնել մինչև 8 գոտուն ամրացվող հաղորդիչ: / Հաճախականության արձագանքը (300 Հg-7 ԿՀg, <+/- 3dB) / Ազդանշանի փոխանցման հեռավորությունը (մինչև 100 մ LAN մալուխի միջոցով) / Չափերը (440 x 126 x 44 մմ)	հատ	1
5.2	Ներքին կապի գոտուն ամրացվող թվային հաղորդիչ՝ Հաճախականության արձագանք (300 Հg-7 ԿՀg, <+/- 3 դԲ)/ Ազդանշանի փոխանցման հեռավորություն (մինչև 100 մ LAN մալուխի միջոցով)/Չափերը (81,2 x 142,6 x 49,6 մմ)/ Ականջակալների միակցիչներ (3,5 մմ Jack)/ Երկգույն LED ազդանշանի կարգավիճակի ցուցիչ	հատ	6
5.3	Հաղորդիչի ականջակալ՝ Երկականջանի փակ անջակալ,	հատ	6

	/Միացում՝ x1 Jack 3.5մմ, Ականջակալների բնութագրերը. Հաճախականության տիրույթ՝ 10Hz-22kHz /դիմադրություն՝ 24 ohm / ձայնային ճնշման մակարդակ 1kHz- ում՝ 98dB / հզորություն՝ 100mW / Կոնդենսատոր / Հաճախականության տիրույթ. 20-16khz / դիմադրություն՝ 2,2kohm		
5.4	Տրանսլյացիոն համակարգի ուժեղացուցիչ՝ Ուժեղացուցիչ 240 W-4 Ohm, L70 / 100V,աշխատանքային4 անկախ գոտի,որոնք կարող են աշխատել առանձին կամ միասին, ցածր դիմադրողականություն (մինչև 4 ohm): Չափերը 483 x 88 x 320 մմ	հատ	2
5.5	Տրանսլյացիոն համակարգի բարձրախոսներ՝ Բարձրախոս պատին ամրացվող: Դիմադրություն (8 ohm), Ընդհանուր հզորություն (60 w) Ընդհանուր հաճախականության միջակայք (70-20,000khz), անջրանցիկ IP54, 6.5" բարձրախոս: Չափերը՝ 200x290 x165 մմ:	հատ	30

Պետական մարմին
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011035335
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Գ. Սաֆարյան
(ստորագրություն)

Կ.Տ

Կազմակերպություն
«Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Վ. Սարգսյան 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001579
ՀՎՀՀ 02510974
Տնօրեն

Կ. Շահբազյան
(ստորագրություն)

Կ.Տ